

[illegible]

1991

4. Հոգին աւորւմ պատկեր է մոր-
ւայն, որ է պատկեր Հօր: «Որդին
պատկեր է Հօր, և Հօգին պատկեր
մորդւայ» բխեալ ի Հօրէ և հանդու-
եալ մորդին՝ երբևայայտնի զօրո-
թիւն նորայ: Դարձեալ և Հայր, որ

մէ բողոքի Բանին՝ Հոգին յայտնէ Եւ
5. Հոգին սուրբ է որ կը բողոքի
ի Հօրէ, համարողակց անոր. յա-
տուկ է Որդւոյ, բայց չյառաջագա-
յիր յիշգրտել, վստահ Հոգին է որ
Աստուածութեան ձայնը կը յայտնէ,
որ է Բանն:

6. Հոգին սուրբ միջնորդ է Հօր
և Որդւոյ մէջ, և որդւոյն միջոցաւ
յարեալ է Հօր. «Միջնորդ ի մէջ
անձնին և ծնեայն, և յարեալ ի Հայր»
Որդւով:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Ճնշվում 24 օգոստ.
Գաշնակութեան մեծ խորհուրդը 7ի
դէմ 61 ձայնիւ կրօնական միադանու-
թեանց բարձունքը որոշեց:

Հոստ 25 օգոստ.
Կարիպուտի 100 ֆունտը գրանցաւ
Հէրաքլի վերադարձը համար:

Վիշնա 26 օգոստ.
Քորիսոնտան Բոլիվի լրացիր փա-
րիզի Պիէր Բիպլիք լրացրին տուած լու-
րը կը հերքէ՝ յայտնելով թէ Հէրաքլի գոր-
ծին վրայ Աւստրիոյ կառավարութեան
կողմէ շրջաբերական գրութիւն չէ բնաւ:

Դոնորա 26 օգոստ.
Թայիզ լրացիր կը ծանուցանէ թէ
Խորհիւ 2,500,000 Անգլ. իրացի փոխա-
ռութիւնը կը կրէր 5 Անգլո-Եգիպտա-
կան զանգային հետ:

Դոնորա 27 օգոստ.
Թայիզ լրացիր կը ծնէ Հէրաքլի
Ծանուցանէ տեսչին պաշտօնի հարկաւ ան-
պատեղ պիտի ելնէ, և վաղ կամ անու-
ղան՝ Աւստրիա և Ռուսիա պիտի միջա-
միտեն Ռուսի լաւագոյնէ երկաթը ծե-
ծել քանի որ ապրէ:

Բելիքի Անգլիական դեսպանը Չինաց
կառավարութեան բռնած ընթացքին վը-
րայ դժգոհութիւն կը յայտնէ Անգլիոյ
կառավարութեան և կառավարիչ որ զօ-
րագունքեր պատրաստ բռնութիւն տրեւ
եղած ատեն Չինաստան զրկուելու հա-
մար:

Ռուսիա 27 օգոստ.
Թիբեթի պաշտօնը կը շարունակէ:
Մէնտի Արի փաշան պարսկէ հոս հասաւ:

Մաւրիտ 27 օգոստ.
Սեօ Թիբեթի բերդն անձնատուր եղաւ:
Դոնորա 27 օգոստ.

Գում	Քանա	36	1/8
Կոթի	1865	61	
	1869	49	3/4
	1871	60	
	1872	70	
	1873	47	1/4
Անգլ. քանա	94	5	8

Իրիւրա 27 օգոստ.
Բամպակ Միսիլի-Օրդան 7 1/2
Ֆուր 8 1/2 քան 4 7/8
Ծախում 15000 հակ:

ՆՆՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր Մահմադ Եւթիմ փաշա-
յին Մեծ—Կարաբոսութեան հա-
տատութիւնն հինգշաբթի օրը կա-
տարեցաւ:

Ժամ 8ին Նորին բարձրութիւ-
նը կայսերական պալատէն ելնելով
հանդիսիւ Բ. Դուռը գնաց և հին
կայսերական խաթիւն կարգացուե-
լով, տէրութեան բարձր նախարարաց
և բարձրաստիճան պաշտօնատարաց
շնորհաւորութիւններն ընդունեց:

Ահաւասիկ կայսերական խաթիւն
թաղմանութիւնը:

Մեծաշուք վէրիք իմ Մահմադ
Եւթիմ փաշա:

Եւստ փաշան Մեծ—Կարաբո-
սութեան պաշտօնէ հանել հարկաւոր
դատելով, ձեր վայ ունեցած վըս-
տահութիւնն և ձեր արդէն փորձով
ցոյց տուած արժանեաց պատճառաւ
զձեզ կոչեցինք յայդ բարձր պաշտօն:
Միանգամայն Պետական խորհրդ-
քոյ նախագահութեան պաշտօնին
ալ մէկը կարգել պէտք ըլլալով Սէր-
վէր փաշային յանձնեցինք, պէտք
եղած հանգամանքն ունենալուն
պատճառաւ:

«Մեր տէրութեան գործերուն
բարեք ձեռնադարձութիւնն և
երկրին զարգացումն, ինչպէս նաեւ
Ժողովրդեան բարեկեցութիւնը մեր
բարձր հոգածութեան աւարկայն ըլ-
լալով, մեր հաստատուն կամքն է որ
աղքատ պաշտպանութիւն և բացար-
ձակ արդարութիւն ըլլայ ընկերու-
թեան ամեն կարգերուն անխառա-
բար, այնպէս որ ամենուն ալ պատիւն
ու իրաւունքն ապահովի:

Եւ որովհետեւ Արդարութեան
բարձրագոյն տեսնին այս փրկուէտ
խորհրդով հաստատուել ըլլալով, մեր
տէրութեան ամենէն կարեւոր պաշ-
տօնատններէն մին է, հարկ անհը-
րաժեշտ է որ այդ պաշտօնատնը
մեր բարեւեր գիտատարութեան հա-
մեմատ գործէ:

Եւ հրամայենք ուրեմն որ այս
գիտատարութիւններս հրատարակուին
և կատարեալ գործողութիւն գրա-
նեն:

«Բարձրաւոր Պետութեան յաջորդ-
ութիւն պարզէ մեր ջանքը:

Կայսերական հրամանաւ՝
Նախորդ Մեծ—Կարաբոս Բարձր.
Եւստ փաշան հատարակային շինու-
թեանց նախարար անուանեցաւ:

Ինչպէս որ նախընթաց թուով ծա-
նուցած էինք, Հէրաքլի կայսերական
տեսուչ անուանեալ վստմ. Սէրվէր
փաշան հինգշաբթի օրը մայրաքա-
ղաքէն ծանուցելու արքունական
իզգէտութիւն շոգեւորով:

Նորին վստմութեան ուղեկից են
ծովային գործող նախարար վստմ.
Բէուֆ փաշայի որդի Բիշապէ, և
հակեւսական կարապետ Էֆէնտի, առա-
ջինը Թուրքիէն և երկրորդը Գաղ-
ղիէն լեզուի քարտուղարութեան
պաշտօնով:

Յունական Վիզանթիոն լրացրին
խօսքին նախելով, կայսերական կա-
ռավարութիւնն ոչ միայն Գանուր-
եան գաւառին այլ և Բուզճիի և Ա-
նատոլի մի քանի գաւառաց պա-
հեստի զօրքերն (Բէուֆ) ի գէն կը
կոչէ: Այս զօրքերն արդէն հեռագե-
տէ Կ. Պօլիս հասնել սկսան, որ քիչ
մը ժամանակ կը թուիէ ետեւ Բու-
մէլի բերդաքաղաքները պիտի գրը-
կուին ի պահպանութիւն:

Կայսերական կառավարութիւնը
նոր կազմուած ջրանկիրաց գունդին
գործածութեան համար բաւական
թուով հրգեհի ջրհաններ ստացրած
էր Բէլճիպէն: Տեղւոյն լրագրութեն
մին կը ծանուցանէ թէ ջրհաններէն
մի քանին շինուած պատրաստուած
ըլլալով Թրիքստ գրիտիւր են շոգե-
նաւով Կ. Պօլիս բերուելու համար:

Պերութեան լուր կուտան թէ քա-
ղաքին մէջ ճարակած քոլեռան այն
ստտիճան օտարախ պատճառաւ է բը-
նակեաց, որ 30000 հոգիէն աւելի
մարդիկ Լիբանան փախել են:

ԱՌՏԱՆԻՆՈՒԹԵԱՆ ԵՍՏԱՐԳ ՈՒՄՈՒՄԸ			
15 օգոստ.	Ուրբաթ	Իրիկոյ	41 9
16 օգոստ.	Շաբաթ	Առաւօտ	
	Բացուցաւ		44 4
	Կէս օր		40 31
Կ. Պօլիս 15 օգոստ.			
Աւելի Եւթիմ փաշայի բարձր. Վեպ. արք.			6.34
« Քոթի անակութեան »			4.30
« Կարապ. Պանշային »			5.30
« Բիւշա Եւթիմ փաշ. »			8.20
« Բիւշա Եւթիմ փաշ. »			—
« Երկրորդ փաշ. »			3.14
« Բիւշա 1863 »			3.14
« 1865 »			3.15
« 1869 »			2.54
« 1872 »			73
« 1873 »			2.44
Թարմաւ Է	Ուրբ. փո		2.75

ԱՌՏԱՆԻՆՈՒԹԵԱՆ 45 ՕՐՈՍՈՍ			
Անգլ. քան	Գում		410 32
Նախընթաց քան			88 17
Իմրեալ Ռուս			89 30
Գրք. քան			31 30
Հինգ ֆրանք			—
Հոգսոց			105 25
Պիւն			131 30

Ա. ՉԳ. Ա. ՅԻՆ

Աղգային ժողովն երէկ գումա-
րեցաւ. Ղարաթիւ ընդ նախագա-
նութեամբ Ամեն. Ս. Պատրիարք
հօր և ատենագետութեամբ վստմ.
Ստեփան փաշայի Արքանեան:

Ժամ 7ին տեսան բացուելով քա-
նի մը բացակայ երեւոյթանաց նա-
մակները կարգացուելէ և նախըն-
թաց նստին ատենագրութիւնը վա-
ւերանայէ ետեւ, ժողովն Սրահար-
գին առաջին խնդրոյն՝ այն է վար-
չական կազմութեան վրայ Մեծա-
պատիւ Ռուսիոյն Էֆէնտի երկար
և հմտակց ատենախօսութիւնը մը-
տիկ բնաւ, որոյ մէջ Ռուսիոյն Է-
ֆէնտին մեր առաջարկած վարչա-
կան կազմութեան ձևը կը շոգեւորէ,
բայց մէկ երկու հիմնական փոփո-
խութիւններ ու հետեւեալներ մըս-
ցնելով, որք բաւական ջիւղ ընդ-
գիծութիւն յարուցին երեւոյթանաց
ոմանց կողմէ. վերջապէս քանի մ'ա-
տենախօսութիւններէ ետեւ՝ ժամը
ստանին մատենադպրատնը գոյ-
ւեցաւ 15 օրէն գումարուելու որոշ-
մամբ:

Ս. Փրկիչ
Եւ
ԿՈՐՈՒՄԵԱՆ ՏԵԼԵԿՐ

... Խմբագիր
Ձեր Լրէկուան թուոյն մէջ ծա-
նուցում մի ունէիք, որ «Պայքէ-
տեր»-ի Մ. Գրիգորի անգղաւոր գա-
լին կորչելը՝ կը յայտնէր, Ս.
Փրկիչ պատասպարանին՝ զանի չընդ ու-
նիլը պատճառ բերելով:

Մենք ոչ պաշտօնական մի մար-
մէն ենք և ոչ պաշտօնական գիտոյ
մի եւթի, այլ մեր սրտի տարի որ մի
արդար բողոքը, այս պատահա-
թիւն, որ բաւ խնդրին ինքն է, քան
առիթը, հասարակութեան ատենին
պիտի ներկայացնենք, ուստի ոչ թէ
ծանուցում մի պիտի ուղղենք, այլ շա-
րիք մի պիտի բաւեամք:

Ինչպէս մեզնէ յառաջ շատեր,
նոյնպէս և մեք Ս. Փրկիչին վար-
ժարանի մէջ աշակերտելով, անոր,
ինչպէս ուրիշ կացութիւնները, նոյն-
պէս բարոյական վիճակին ԵՐԲԵՄՆԱԿԻ
տաղթորիկաւ աւերումը, խաղաղու-
թեան վրդովումը և սրբութեան եղ-
ծումը մեր ուշադրութիւնը գրաւած
են, և այս շարեաց պատճառները
որոնելով, գտած ենք որ միշտ էւրե-
քան ինչպէս և զգոյն ինչպէս ան-
գոյն ինչպէս Էֆէնտի եղած է:

Եւ մի միտմամբ, անմեղ և աշ-
խատաւոր որբերն միջոցաւ խաղա-
ղիկ ու լուրի իրենց գաւառներն կը դ-
րադէին, ահա կը նային անդիէն մի
անառակ տղայ, ամիրայ մի կամ
պաշտօնական անձի մի հրամանաւ,
հետախնդի միտնէն, և անառակու-
թեան միտնէն փախելով ծոցը, զոր կը
տային անոր իր ընդունելութեան
արտօնագիր, կը հասնէր Փրկիչ, սիր-
տը ծովի զրիտայ սրիկայանոցներու
մէջ համանման ընկերներով տպակա-
նած, միտքը մոլորիկը աղտերով տո-
գորուած, միտքը բանիւ՝ նեխած ու
ձախիւ տպակաւութիւնն ինքը կու-
գար ի վարժարան քան ապական-
եալ աշակերտացու մի, կիցեմբ անա-

բաւ որբերուն մէջ, ապաւ առ տա-
կաւ կը ծառայէր իւր գարշահոտ գոր-
ծերն ու վարդապետութիւններ,
գիւտեր ու ձևեր, ամիսէ մի կամ
երկուքէն վարժարանը հոգեւորութե-
ան նորնթաց հոգեւոր մէջ կը
տարուբերէր, և հէ՛գ. դաստիարակ
ու դասաւոր, ընդունայն կը հոգեւոր
գիտնալու թէ ինչո՞ւ համար ժամա-
նակէ մ'ի վեր, ուսանողաց վրայ մի
և նոյն աշխատասիրութիւնը չի աւա-
նուիր, ինչո՞ւ վարժարանի լուսնիւ-
նըն ու խաղաղութիւնն ատենէ մ'ի
վեր կը վրդովի, ինչո՞ւ մանկանց գի-
մաց վրայ դաւաճութիւնը կը ծա-
ւալի և հիւանդութիւններ կը յա-
ճախեն:

Միտնութեան այս գաղիւ մարմնա-
ւորութիւնն եթէ անառակ և անառ-
կէն, ինչո՞ւ համար անառականոցի կամ
յիմարանոցի մէջ չի բանտարկել և
անխորհրդաբար ձգել զայն խել մի
անմեղ մանկանց մէջ:

Եթէ Ս. Փրկիչ աշտուրջ հոգա-
բարձութիւնն այս մտածմամբ մեր-
ժեց Գ. Գրիգորի որդին, շատ մեծ
ժառանգութիւն մի արաւ Աղգին, և
մինք այն աստիճան շնորհակալ ենք
որ աստիճան խորովուած է մեր սիր-
տին այս մտայն:

Թերեւս ոմանք պիտի առարկեն
թէ հոգաբարձութիւնն այդ աղան
կրնայ յիմարանոցին մէջ կամ ուրիշ
զոտ տեղ մը պահել:

Յիմարանոցն, ուր պիտի երթայ
երեքտասանամեայ տղեկը, հոգե-
տասանամեայ և քսանամեայ պա-
տենին, երեքամեայ երիտասարդը,
որոնք նոյնպէս անառակ են, ուր կը
գտնուին արդէն խնդիւն ու դիւա-
հարը, որ ստիպուած և անառակ կը բե-
րեն մանկան, ժամանակին մի քանի
բարոյական ախտաժեւոտութիւնը այս-
նեց և կորուստները ցուցուց:

Հարկ է պատանեաց համար մի
մասնաւոր ԱՆԱԿԱՆՈՒՄԸ լինել, որ
նաեւ դաստիարակէ զուրկ չգտնուի,
և ասի թէ՛ որք գաւառակներուն ե-
րամբ դպրիւրու ապականութենէն ու
ճիւղաններէն աղտաւ կը պահէ և թէ
անառակին ախտէ և իւր ինկած փո-
սին մէջ խորատու զեւէ աղտաւ կը պահէ:

Երբ խնդիրն այսպիսի չէնք և
ժախտուց յոյս է, կարծեմ ամեն Հայ
կը լռէ...

Մենք չենք գիտեր ոչ խնդրոյն
հշմարութիւնը և ոչ հոգաբարձու-
թեան պատասխանը, միայն որբե-
րուն ծառայելու փափաքանք գը-
րեցինք զայս:

Խնդրելով որ ներկայս հրատարա-
կելու հաճիք, Միամ...

Կ. Պօլիս ԹԱԹՈՒԼ
13 օգոստ. 1875

Ղարաթիւ Շուշի քաղաքէն հե-
տեւալը գրած են մեզ հրատարա-
կելու խնդրանք:

Խմբագիր Պատուական Մասիս
լրագրոյ:

«Պատուական Մասիս» անցաւ
մայիս 17րդ աւուր 10/14րդ թիւ հանդի-
սի մէջ կարգացիք ճիւղիս Վալի Լը-
րագրի տեղւոյս Արժ. Հայր Խորէն վար-
դապետ Ստեփանի վերաբերմամբ նոյն
Խաղաղութեան քաղած մի յօդուածը, ու
ով յիշեալ Վալի մեծապատիւ Խաղա-
ղիւր հաղորդում էր թէ Է. Խորէն Վ.
Ստեփանի Շուշիից հրաւիրուած է իրա-
դու (Մարդասիրական ընկերութեան կող-
մից տեղւոյն Հոգեւոր դպրոցի տեղու-
թեանը) Արժ. Հայրիկը համաձայնուել է
մի քանի պայմաններ առաջարկելով զորս
ընդունել են Բաղդադիներ, և թէ այս
լուրը մեծ ուրախութիւն է պատճառաւ
առաւելապէս Հայ ուսանողներին: Սոյն
այս յօդուածի վերաբերմամբ նոյն պար-

